ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2018/132

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով քաղաքացի Արշամ Շահինյան կողմից 28.12.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. <u>Քաղաքացի Արշամ Շահինյան ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Քաղաքացի Արշամ Շահինյանը (այսուհետ՝ նաև բողոքաբեր) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 28.12.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից 11.12.2018թ. սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(18/5-Ս)» ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետ նաև՝Ընթացակարգ/:

Ընթացակարգով հրավերի թիվ 7 հավելվածի՝ պայմանագրի նախագծի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ մատակարարումներն իրականացվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2018թ.-ի դեկտեմբերի 25-ը, ըստ պատվիրատուի պահանջի:

Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 18.12.2018թ., կազմվել են թիվ 3-րդ և 4-րդ արձանագրությունները, որի արդյունքում հանձնաժողովի կողմից ճանաչվել են 1-ին տեղ զբաղեցնող մանակիցները:

Հայտնում ենք, որ բողոքի համար հիմք է հանդիսացել այն փաստը, որ մեզ է տրամադրվել Պատվիրատուի և մի քաղաքացու նամակագրություն այն մասին, որ «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ն իր պաշտոնական էլեկտրոնային հասցեից ուղարկած հաղորդագրության մեջ նշել է, որ ապրանքների մատակարարումը մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը սահմանելը սխալ է՝ տեխնիկական վրիպակի արդյունք: Սակայն, գտնում ենք, որ դա արվել է միտումնավոր, որպեսզի մոլորեցվի մյուս հավանական մասնակիցների գնման ընթացակարգին մասնակցությունը, որը հակասում է ներքոնշյալ իրավական նորմերին, մասնավորապես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 3-րդ հոդվածի համաձայն՝

Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք: Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության

կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը.

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Ելնելով Պատվիրատուի կողմից հրավերով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի և վերը նշված իրավական հիմքերից, գտնում ենք, որ «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից խախտվել են Օրենքի 3-րդ, 7-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված պահանջները: Մասնավորապես թիվ 1 հավելվածով սահմանվել է, որ մատակարարումներն իրականացվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը, ըստ պատվիրատուի պահանջի: Այս պատճառով, մենք, որպես մասնակից կարդալով սույն հրավերի պահանջը, միաժամանակ գիտակցելով որ հնարավոր չէ նման ժամկետներում մատակարարել այդ քանակությամբ ապրանք, հայտ չենք ներկայացրել և չենք մասնակցել սույն գնման ընթացակարգին: Սակայն, տեղեկանալով, որ նման ժամկետի սահմանումը սխալ է և հենց Պատվիրատուն է ընդունում իր սխալը, և գիտակցելով որ այլ ժամկետ

սահմանելու պայմաններում մենք հնարավորություն կունենանք մասնակցել և նույնիսկ հաղթող ճանաչվել մի շարք չափաբաժիններով՝ ներկայացրել ենք բողոք: Այս պարագայում գտնում ենք, որ առկա է մասնակցության իրավունքի կոպիտ խախտում, ստեղծվել են անհավասար պայմաններ, նման մոտեցումը խտրական է և հակասում է գնումների մասին ՀՀ օրենքին:

Ելնելով վորոգրյալից՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք պարտավորեցնել «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 11.12.2018թ. հայտարարված «ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(18/5-Ս)» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել վերը նշված գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին համապատասխան որոշում:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչ Լինա Քոչարյանը:

2. «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) քաղաքացի Արշամ Շահինյան կողմից 28.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 10.01.2019թ. թիվ 01/68 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից 11.12.2018թ. «ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(18/5-Ս)» ծածկագրով հայտարարվել է գնման ընթացակարգ: Բողոքարկման առարկա հանդիսացող փաստը՝ մատակարարում պահանջել մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը, վրիպակ է, տեխնիկական սխալ: Վերոնշյալ հղումը՝ հրավերի մաս կազմող, տեխնիկական բնութագրի բովանդակությունից է վերցված, որի ամբողջական պատկերը մեջբերում ենք՝ «մատակարարումներն իրականացվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը, ըստ պատվիրատուի պահանջի, պատվիրատուի կողմից սահմանված քանակներով, ընդ որում, առաջին խմբաքանակը՝ պատվերը տրամադրելու օրվանից հաշված 20 օրվա ընթացքում, մնացած պատվերների դեպքում՝ ըստ մատակարարման պայմանի (օրական)**: ՀՀ, ք.

Երևան, Նուբարաշեն համայնք 6 փող. թիվ 2 հասցեով, «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ: **Օրական պատվերը տրվում է մինչև նախորդ օրվա ժամը 18:00-ը, իսկ մատակարարումն իրականացվում է մինչև տվյալ օրվա ժամը 9:00: Պատվերը տրվում է պատվիրատուի էլ. փոստից՝ marzadproc2017@mail.ru հասցեից մատակարարի էլ. փոստին գնման պատվեր ուղարկելու միջոցով»:

Ինչպե՞ս կարող է մրցույթի օր նշանակվել 2018թ. դեկտեմբերի 18-ը և մատակարարում պահանջվել մինչև 2018 թ. դեկտեմբերի 25-ը, եթե առաջին խմբաքանակը պահանջվել է մատակարարել 20 օրվա ընթացքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Բողոքարկող անձը հիշյալ փաստը պետք է ներկայացներ մինչև հայտերի բացման օրը, և կազմակերպությունը կշտկեր վրիպակը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Լուսիկ Մաքյանը և Նոռա Ղազարյանը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2018/132 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է քաղաքացի Արշամ Շահինյան կողմից 28.12.2018թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(18/5-Ս)» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի քաղաքացի Արշամ Շահինյան կողմից 28.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 10.01.2019թ. թիվ 01/68 գրությամբ հայտնած դիրքորոշումը.

«Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(18/5-Ս)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանվել են սննդամթերքի մատակարարման հետևյալ պայմանները.

«Մատակարարումներն իրականացվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2018թ-ի դեկտեմբերի 25-ը, ըստ պատվիրատուի պահանջի, պատվիրատուի կողմից սահմանված քանակներով, ընդ որում առաջին խմբաքանակը պատվերը տրամադրելու օրվանից հաշված 20 օրվա ընթացքում, մնացած պատվերների դեպքում՝ ըստ մատակարարման պայմանի (օրական)**: ՀՀ ք. Երևան Նուբարաշեն համայնք 6 փող. թիվ 2 հասցեով, «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ): **Օրական պատվերը տրվում է մինչև նախորդ օրվա ժամը 18:00-ը, իսկ մատակարարումն իրականացվում է մինչև տվյալ օրվա ժամը 9:00: Պատվերը տրվում է պատվիրատուի էլ. փոստից՝ marzadproc2017@mail.ru հասցեից Մատակարարի էլ փոստին գնման պատվեր ուղարկելու միջոցով»:

Ընթացակարգի հայտարարությամբ հայտերի բացման օր և ժամ սահմանվել է նույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա (18.12.2018թ.) ժամը 11:00:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ բողոքաբերը պնդեց Բողոքի քննության շրջանակներում հայտնած գրավոր դիրքորոշումն ամբողջությամբ:

Բողոքաբերի ներկայացուցիչը հավելեց, որ ներկայացված բողոքի համար հիմք է հանդիսացել Պատվիրատուի և ոմն քաղաքացու՝ իր վստահորդին տրամադրված էլեկտրոնային նամակագրությունն այն մասին, որ «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ն իր պաշտոնական էլեկտրոնային հասցեից ուղարկած հաղորդագրության մեջ նշել է, որ ապրանքների մատակարարումը մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը սահմանելը տեխնիկական վրիպակի արդյունք է: Վերջինս, սակայն, կարծիք հայտնեց, որ Պատվիրատուի կողմից դա արվել է միտումնավոր՝ այլ հնարավոր մասնակիցների մոլորեցնելու և նրանց Ընթացակարգին մասնակցելուց ձեռնպահ պահելու նկատառումներով, ինչով ուղղակիորեն խախտվել է իր և հնարավոր այլ մասնակիցների՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ ամրագրված մասնակցության իրավունքը:

Միաժամանակ, Բողոքաբերի ներկայացուցիչն ընդունեց, որ Բողոքի համար հիմք են հանդիսացել Հրավերով նախատեսված գնման առարկայի բնութագրերը, մասնավորապես՝ ապրանքի մատակարարման պայմանները:

Պատվիրատուի ներկայացուցիչն առարկեց՝ հավաստիացնելով, որ Բողոքաբերի կողմից նշված՝ Հրավերի տեխնիկական բնութագրում ներառված պայմանն ընդամենը տեխնիկական վրիպակի արդյունք է, քանի որ չէր կարող Ընթացակարգի հայտերի բացման օր սահմանվել 18.12.2018թ., իսկ ապրանքի մատակարարումն իրականացվեր պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը, ինչը հակասում է առողջ տրամաբանությանը, առավելևս, որ նույն բնությագրով սահմանվել է ևս մեկ հավելյալ պայման՝ առաջին խմբաքանակը մատակարարել պատվերը տրամադրելու օրվանից հաշված 20 օրվա ընթացքում: Պատվիրատուի ներկայացուցիչը հավելեց, որ եթե Բողոքաբերը հիշյալ փաստը ներկայացեր մինչև հայտերի բացման օրը, կամ դրա վերաբերյալ պարզաբանում պահանջվեր գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամանակահատվածում, ապա ՊՈԱԿ-ը հնարավորություն կունենար շտկելու վրիպակը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագիրը գնման առարկայի հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններն են:

Օրենքի 13-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը (...):

Օրենքի՝

- 28-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի գնման առարկայի բնութագրերը:

- 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը

տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

- 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանվել են սննդամթերքի մատակարարման հետևյալ պայմանները. «Մատակարարումներն իրականացվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2018թ-ի դեկտեմբերի 25-ը, ըստ պատվիրատուի պահանջի, պատվիրատուի կողմից սահմանված քանակներով, ընդ որում առաջին խմբաքանակը պատվերը տրամադրելու օրվանից հաշված 20 օրվա ընթացքում, մնացած պատվերների դեպքում՝ ըստ մատակարարման պայմանի (օրական)**(...):

- Պատվիրատուի կողմից վերոհիշյալ պայմանը որակվեց որպես տեխնիկական վրիպակի արդյունքում հրապարակված պայման:

- Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 18.12.2018թ. ժամը 11:00-ին:

- Քաղաքացի Արշամ Շահինյանի կողմից Բողոքը Բողոքներ քննող անձին է ներկայացվել 28.12.2018թ.:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով, որ քաղաքացի Արշամ Շահինյանի կողմից ներկայացված Բողոքի առարկան հանդիսանում է Հրավերով նախատեսված գնման առարկայի բնութագիրը, մասնավորապես՝ ապրանքի մատակարարման պայմանները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Բողոքը ներկայացվել է Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հետո, հետևաբար Բողոքներ քննող անձը գտնում է, որ Բողոքաբերի կողմից Բողոքը ներկայացվել է գնման առարկայի բնութագրերը բողոքարկելու համար Օրենքով նախատեսված ժամկետների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

Քաղաքացի Արշամ Շահինյանի կողմից Բողոքներ քննող անձին 28.12.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ